ԳԻՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

1. «Երևան քաղաքի կենտրոն համայնքի առավել աղմկոտ տարածքներում շրջակա միջավայրի վրա ազդող աղմուկի մակարդակների բնութագրման ծրագիր»

Նպատակ՝ Ստեղծել աղմուկի քարտեզներ, որոնք հստակ պատկերացում կտան բնակավայրերում աղմուկի մակարդակի վերաբերյալ: Ծրագիրը կնպաստի հետագա աշխատանքների արդյունավետ կազմակերպմանը, բնակչության համար անվտանգ միջավայր ստեղծելու համար:

Գործողություններ՝

- Ստեղծել աշխատանքային խումբ
- Ուսումնասիրել միջազգային փորձը
- Ուսումնասիրել քաղաքի առավել աղմկոտ հատվածները՝ արդյունաբերական հանգույցները, առավել ծանրաբեռնված փողոցները, ժամանցի վայրերը /ռեստորաններ, գիշերային ակումբներ և այլն/:
- Չափումներ իրականցնել նախապես ընտրված կետերում
- Առանձնահատուկ հաշվի առնել Երևան քաղաքի ռելիեֆը, մասնավորապես՝ ձորերում տեղակայված աղմուկի աղբյուրները /ռեստորաններ, ժամանցի վայրեր և այլ/, որոնց միջոցով աղմուկը տեղափոխվում է Երևան քաղաքի այլ շրջաններ ավելի մեծ ուժգնությամբ:

Ակնկալվող արդյունք՝

Մշակված քարտեզները կներկայացվի համապատասխան լիազոր մարմիններին, որոնք կոժանդակեն աղմուկի նվազեցման ուղղությամբ իրականացնել առավել նպատակային և արդյունավետ միջոցառումներ առողջության պահպանման համար: Ծրագրի իրականացումը, բացի կարևորագույն առողջապահական, էկոլոգիական և քաղաքաշինական հիմնահարց լինելուց, կարժանանա մեծ հասարակական արձագանքի իբրև լուրջ ներդրում բնակչության առողջության և կենսամակարդակի բարձացման գործում:

Աղմուկի քարտեզը տալիս է հետևյալ հնարավորությունները՝

- Տարածքի գնահատում ճարտարապետական ակուստիկայի տեսանկյունից,
- Առողջապահական կենտրոնների, մանկապարտեզների և այլ հաստատությունների շրջակայքում աղմուկի վերաբերյալ տեղեկատվություն,
- Քաղաքի վարչական շրջանների աղմուկի մակարդակի վերաբերյալ տեղեկատվություն,
- Աղմուկի առավել ոչ բարենպաստ գոտիների հայտնաբերում,
- Նորակառույց շենքերի տեղակայման վայրի որոշում ակուստիկ տեսանկյունից
- Տրանսպորտային հոսքերի ճիշտ կառավարում քաղաքի շրջաններում

- Աղմուկի դեմ պայքարի միջոցառումների իրականացում

Ֆինանսավորում՝ ՀՀ պետական բյուջե

2. ԱՄՆ դեսպանության Պաշտպանության դեպարտամենտի Վտանգների նվազեցման գործակալության հետ համագործակցության շրջանակներում ԱՄ-4՝ «Մեկ առողջություն. բրուցելոզի հսկողություն Հայաստանում» ծրագիր:

Նպատակը. Ամրապնդել համագործակցությունը և հաղորդակցումը առողջապահության և անասնաբուժության ոլորտների միջև՝ բրուցելոզի բռնկման դեպքերի, ինչպես նաև համաճարակաբանական ուսումնասիրությունների ժամանակ և բարելավել Հայաստանում հիվանդության բեռի մասին իրազեկվածությունը:

Գործողություններ

1) <Գիտելիք–վերաբերմունք-պրակտիկա> սկզբունքով ոլորտի մասնագետների գիտելիքների գնահատում, բացերի վերլուծություն
2) Կրթական ծրագրերի մշակում՝ իրազեկվածության և համաճարակաբանական հսկողության առանձնահատկություններին տիրապետելու ուղղությամբ
3) Բրուցելոզի ռետրոսպեկտիվ վերլուծության իրականացում՝ մարդկային և կենդանական դեպքերի համադրությամբ, ռիսկերի վերլուծություն և քարտեզագրում
4) Հիվանդության կենդանիների և մարդկանց շրջանում դեպքերի վերացման ուղղությամբ ինտեգրացված միջոցառումների ծրագրի մշակում, սահմանված կարգով հաստատում
5) Բրուցելոզի օրինակի վրա <Մեկ առողջություն> հայեցակարգի նախագծի մշակում:

Ակնկալվող արդյունք. Բրուցելոզի համակարգված և ինտեգրված հսկողությունը մարդկանց և կենդանիների պոպուլյացիաների շրջանում՝ <Մեկ առողջության> սկզբունքով:

Ֆինանսավորում՝ ԱՄՆ ԿՈՆՀ ծրագիր (ֆինանսավորման չափի մասին տեղեկություն դեռ չունենք):

3. **«Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում շրջանառող մանրէների ախտահանիչ նյութերի նկատմամբ զգայունության որոշման ծրագիր**

Նպատակը՝ ուսումնասիրել ԲԿ-ում շրջանառող մանրէները և դրանց զգայունությունը տվյալ կազմակերպությունում կիրառվող ախտահանիչ նյութերի նկատմամբ:
Գործողություններ՝

Թվով 5 պարեկ ԲԿ-ում ախտահանիչ նյութերի կիրառման և դրանց նկատմամբ մանրէների զգայունության որոշման ուսումնասիրություն:

ԲԿ-ներում մանրէաբանական լաբորատորիայի լաբորատոր ներքին հսկողության արդյունքների, շրջակա միջավայրի մակերեսներից անջատված շտամների, դրանց ախտահանիչ նյութերի նկատմամբ զգայունության որոշման արդյունքների ուսումնասիրություն:

Շրջակա միջավայրի մակերեսներից ախտահանման որակի, լվացուկների լաբորատոր հետազոտությունների իրականացում՝ շրջանառող շտամների որոշում: Անջատված շտամների ախտահանիչ նյութերի նկատմամբ զգայունության որոշում:

ԲԿ-ներում ներքին լաբորատոր հսկողություն իրականացնելու ընթացքում անջատված շտամների տվյալ ԲԿ-ում օգտագործվող ախտահանիչ նյութերի նկատմամբ զգայունության որոշում:

Ակնկալվող արդյունքները՝ ԲԿ-ում շրջակա միջավայրի մակերեսներից անջատված հարուցիչների զգայունության որոշում տվյալ կազմակերպությունում օգտագործվող ախտահանիչ միջոցների նկատմամբ և այդ նյութերի նկատմամբ կայուն շտամների բացահայտման դեպքում ախտահանիչ նյութի փոխարինման վերաբերյալ առաջարկությունների մշակում և ներկայացում ԲԿ-ին:

Բացահայտել հոսպիտալային շտամների ախտահանիչ նյութերի նկատմամբ կայունության միտումները և մշակել առաջարկություններ ախտահանիչ նյութերի նպատակային կիրառման, ինչպես նաև դրանց նկատմամբ հոսպիտալային շտամների կայունության կանխարգելման ուղղությամբ:

Ֆինանսավորումը՝պետական բյուջե

4. «Քաղաքային բնակչության շրջանում էխինակոկոզի տարածվածության և դրա տարածման ռիսկի գնահատման, բնակչության իրազեկվածության բարձրացման ծրագիր»

Նպատակը՝ է որոշել բնակչության տվյալ խմբում էխինակոկոզի իրական տարածվածությունը, բացահայտել տարածման ռիսկի գործոնները, ներկայացնել առաջարկություններ հիվանդության կանխարգելման միջոցառումների կազմակերպման ուղղությամբ, ինչպես նաև՝ բարձրացնել բնակչության իրազեկվածությունը հիվանդության և դրա կանխարգելման վերաբերյալ:

Գործողություններ՝

Էխինակոկոզի վերաբերյալ տվյալների հետահայաց վերլուծություն

Բնակչության համակարգված ընտրանք (Երևանի, Գյումրու և Վանաձորի պոլիկլինիկաների ցուցակներից)՝ հետազոտվող խմբի որոշում

Հարցախույզի իրականացում հարցաթերթիկների լրացմամբ՝ ռիսկի խմբերի բացահայտման, ինչպես նաև՝ էխինակոկոզի վերաբերյալ տեղեկացվածության վերաբերյալ

Լաբորատոր իմունաֆերմենտային հետազոտությունների իրականացում Հարցախույզի և լաբորատոր հետազոտության արդյունքների վրա հիմնված համաճարակաբանական վերլուծություն EPI Info ծրագրի միջոցով

Բժշկահիգիենիկ գիտելիքների տարածում

էխինակոկոզի կանխարգելման առաջնահերթ միջոցառումների կազմակերպման առաջարկությունների ներկայացում

Ակնկալվող արդյունքները՝ ի քաղաքային բնակչության շրջանում էխինակոկոզի իրական տարածվածության որոշում, տարածման ռիսկի գործոնների վերլուծություն, ինչը, համեմատելով գյուղական բնակչության շրջանում կատարված հետազոտությունների արդյունքների հետ, հիմք կհանդիսանան հիվանդության կանխարգելման միջոցառումների առաջարկությունների համար:

Ֆինանսավորումը՝պետական բյուջե

5. «Հակամանրէային դեղերի նկատմամբ մանրէային կուլտուրաների զգայունության որոշման և կայունության մեխանիզմների հայտնաբերման ծրագիր»

Նպատակը՝ հակամանրէային դեղերի նկատմամբ շրջանառող ախտածին և պայմանական ախտածին մանրէային կուլտուրաների զգայունության որոշման, կայունության մեխանիզմների հայտնաբերման միջոցով կայուն և/կամ բազմակայուն շտամների հանդեպ հսկողության և մշտադիտարկման իրականացում:

Գործողություններ՝ Որպես հետազոտության թիրախային ընտրվել են այն մանրէային կուլտուրաները, որոնք անջատվել են մարդու առաջնային մանրէազերծ հեղուկներից՝ հիմնականում արյունից և մեզից: Մնացած դեպքերում ուսումնասիրության կենթարկվեն միայն այն մանրէային կուլտուրաները, որոնք կունենան կլինիկական կարևորություն և/կամմարզային մասնաճյուղերի լաբորատորիաներում հետազոտությունների արդյունքում կդրսևորեն կայունություն: Կիրականացվեն արդեն իսկ նույնականացված մանրէային կուլտուրաների լաբորատոր հետազոտություններ (ՀՄԴ-ների նկատմամբ զգայունության որոշում և կայունության մեխանիզմների հայտնաբերում): Ծրագիրը կընդգրկի թվով մոտ 200 մանրէային կուլտուրայի հետազոտություն: Մանրէային կուլտուրաները կստացվեն Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության«Լոռի», «Արարատ», «Սյունիք», «Շիրակ»և«Արմավիր» մարզային մասնաճյուղերից:

Ակնկալվող արդյունքները՝ ստացված արդյունքների հիման վրա կկատարվեն վերլուծություններ՝ մանրէային կայուն շտամների շրջանառության վերաբերյալ:Կատարված վերլուծությունների հիման վրա կմշակվեն առաջարկություններ, կստեղծվի ընտրված մարզերում և/կամ բժշկական կազմակերպություններում շրջանառող մանրէային կայուն շտամների տվյալների բազա:

Ֆինանսավորումը՝պետական բյուջե

6. **«Հայաստանի Հանրապետությունում հելիկոբակտեր պիլորիով ներընտանեկան վարակվածության հետազոտության ծրագիր»**

Նպատակը՝ ստամոքս-աղիքային տրակտի վերին հատվածների բորբոքային հիվանդություններով տառապող պացիենտների մոտ HP-ի մանրէների հայտնաբերման դեպքում, նրանց ընտանիքների անդամների վարակվածությաւն հետազոտում:
Գործողություններ՝ Ստամոքս-աղիքային տրակտի վերին հատվածների բորբոքային հիվանդություններով տառապող ընտրված ԲԿ-ների գաստրոէնտերոլոգիական-կամ վիրաբուժական բաժանմունքների հիվանդների հետազոտում HP-ի մանրէների վերաբերյալ:

Հարցաթերթիկների կիրառմամբ պացիենտների և նրանց ընտանիքների անդամների հարցախույզի իրականացում:
HP-դրական պացիենտների ընտանիքների բոլոր անդամների հետազոտում:
Ակնկալվող արդյունքները՝ ստացված արդյունքների հիման վրա կկատարվեն վերլուծություններ՝ մանրէային կայուն շտամների շրջանառության վերաբերյալ:Կատարված վերլուծությունների հիման վրա կմշակվեն առաջարկություններ, կստեղծվի ընտրված մարզերում և/կամ բժշկական կազմակերպություններում շրջանառող մանրէային կայուն շտամների տվյալների բազա:
Ֆինանսավորումը՝պետական բյուջե

7. **«Հայաստանի Հանրապետությունում հելիկոբակտեր պիլորիով ներընտանեկան վարակվածության հետազոտության ծրագիր»**

Նպատակը՝ ստամոքս-աղիքային տրակտի վերին հատվածների բորբոքային հիվանդություններով տառապող պացիենտների մոտ HP-ի մանրէների հայտնաբերման դեպքում, նրանց ընտանիքների անդամների վարակվածությաւն հետազոտում:
Գործողություններ՝ Ստամոքս-աղիքային տրակտի վերին հատվածների բորբոքային հիվանդություններով տառապող ընտրված ԲԿ-ների գաստրոէնտերոլոգիական-կամ վիրաբուժական բաժանմունքների հիվանդների հետազոտում HP-ի մանրէների վերաբերյալ:

Հարցաթերթիկների կիրառմամբ պացիենտների և նրանց ընտանիքների անդամների հարցախույզի իրականացում:
HP-դրական պացիենտների ընտանիքների բոլոր անդամների հետազոտում:
Ակնկալվող արդյունքները՝ ստացված արդյունքների հիման վրա կկատարվեն վերլուծություններ՝ մանրէային կայուն շտամների շրջանառության վերաբերյալ:Կատարված վերլուծությունների հիման վրա կմշակվեն առաջարկություններ, կստեղծվի ընտրված մարզերում և/կամ բժշկական կազմակերպություններում շրջանառող մանրէային կայուն շտամների տվյալների բազա:
Ֆինանսավորումը՝պետական բյուջե

8. «Հայաստանի Հանրապետության ընտրված բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում ռիսկի խմբերում վիրուսային հեպատիտ Բ-ի և Ց-ի վարակվածության, ինչպես նաև հեպատիտ Ց-ի գենային տարբերակների տարածվածության որոշման ծրագիր»

Նպատակը՝Հայաստանի Հանրապետության ընտրված բժշկական կազմակերպություններում (այսուհետ՝ ԲԿ) ռիսկի խմբերում վիրուսային ՀԲ-ի և ՀՑ-ի վարավածության և ՀՑ-ի գենային տարբերակների տարածվածության որոշում :

Գործողություններ՝ Իրականացվում է 2016-2017 թվականների ընթացքում բնակչության տարբեր խմբերի շրջանում ՀԲ-ի (ՀԲ-ի վիրուսի մակերեսային հակածնի՝ HBsAg) և ՀՑ-ի (ՀՑ-ի վիրուսի հանդեպ հակամարմինների հակա-ՀՑՎ–ի և ՀՑ-ի վիրուսի ՌՆԹ-ի) դրոշմների հայտնաբերման տվյալների վերլուծություն:

Իրականացվում է արագ թեստով HBsAg-դրական արյան շիճուկների հետազոտությունը իմունաֆերմենտային անալիզի մեթոդով HBsAg-ի նկատմամբ՝ հաստատող թեստ: Իրականացվում է արագ թեստով հակա-ՀՑՎ-դրական արյան շիճուկների հետազոտությունը իմունաֆերմենտային անալիզի մեթոդով հակա-ՀՑՎ-ի նկատմամբ՝ հաստատող տեստ Իրականացվում է իմունաֆերմենտային անալիզի մեթոդով HBsAg-դրական արյան նմուշների հետազոտությունը ՀԲ-ի վիրուսի ԴՆԹ-ի նկատմամբ ՊՇՌ մեթոդով Իրականացվում է իմունաֆերմենտային անալիզի մեթոդով հակա-ՀՑՎ դրական արյան նմուշների հետազոտությունը ՀՑ-ի վիրուսի ՌՆԹ-ի նկատմամբ ՊՇՌ մեթոդով :ՀՑ-ի վիրուսի առկայության դեպքում որոշել գենային տարբերակը:
25.Հետազոտությանների հիման վրա իրականացվելու է արդյունքների վերլուծություն և առաջարկությունների մշակում:

Ակնկալվող արդյունքները՝ ԲԿ-ր դիմած «առողջ» բնակչության շրջանում ՀԲ-ի և ՀՑ-ի վարակվածության վաղ բացահայտում: ՀԲ-ով և ՀՑ-ով վարակված անձանց բուժման ուղղորդում: ՀԲ-ի և ՀՑ-ի վարակի աղբյուրի թվաքանակի նվազեցում, հաջորդիվ ՀԲ-ի

և ՀՑ-ի հիվանդացության նվազեցում:Արտաընդերային վիրուսային հեպատիտների ներհիվանդանոցային վարակման նվազեցում:.Բուժաշխատողների մասնագիտական անվտանգության ապահովում:
Ֆինանսավորումը՝պետական բյուջե

9. «Լեյշմանիոզի իրական տարածվածության հետազոտությունների և հիվանդացության հետահայաց վերլուծության ծրագիր»

Նպատակը՝ գնահատել լեյշմանիոզի իրական տարածվածությունը և հիվանդության տարածման ռիսկի գործոնները, ինչպես նաև մշակել հիվանդության կանխարգելմանն ուղղված համալիր միջոցառումներ:
Գործողություններ՝ Լեյշմանիոզի վերաբերյալ տվյալների հետահայաց վերլուծությունԼեյշմանիոզի դեպք արձանագրած բնակավայրերում արագ ախտորոշման թեստերով իրականացված երեխաների հետազոտությունների արդյունքների վերլուծություն: Հարցախույզի իրականացում հարցաթերթիկների կիրառմամբ՝ ռիսկի խմբերի բացահայտման, ինչպես նաև՝ լեյշմանիոզի վերաբերյալ տեղեկացվածության վերաբերյալ:Հարցախույզի և լաբորատոր հետազոտության արդյունքների վրա հիմնված համաճարակաբանական վերլուծություն EPI Info ծրագրի միջոցով:Բժշկահիգիենիկ գիտելիքների տարածում բնակչության շրջանում::Հետազոտությանների հիման վրա իրականացվելու է արդյունքների վերլուծություն և առաջարկությունների մշակում:

Ակնկալվող արդյունքները՝ Բժշկահիգիենիկ գիտելիքների տարածում բնակչության շրջանում:Լեյշմանիոզի կանխարգելման առաջնահերթ միջոցառումների կազմակերպման առաջարկությունների ներկայացում:

Ֆինանսավորումը՝պետական բյուջե:

10. «Հայաստանի Հանրապետությունում հղիների շրջանում լիստերիոզի տարածվածության ծրագիր»

Նպատակը՝ բացահայտել բարդացած մանկաբարձական վերհուշով և հղիության ժամանակ որոշակի կլինիկական ախտանշաններ ունեցող հղիների շրջանում լիստերիոզով վարակվածության մակարդակը:
Գործողություններ՝ Հարցաթերթիկների կիրառմամբ հարցախույզի իրականացում՝ թիրախային խմբի (հետազոտման ընտրանքի) ձևավորում:Թիրախային խմբի մեջ ընդգրկված հղիների լաբորատոր հետազոտությունների իրականացում մոլեկուլային-կենսաբանական մեթոդով՝ պոլիմերազային շղթայական ռեակցիա: Հարցախույզի և լաբորատոր հետազոտությունների արդյունքների էլեկտրոնային բազայի ձևավորում, տվյալների ամփոփում՝ հաջորդիվ վերլուծություն, դինամիկ քարտեզների

ապահովմամբ՝ պարզաբանելու լիստերիոզի արձանագրված դեպքերի զարգացման միտումները:

Ակնկալվող արդյունքները՝ Մանկաբարձական ախտաբանությունում լիստերիա մոնոցիտոգենեսի դերի նախնական բացահայտում: Հղիության ինքնաբուխ կրելախախտերի, վաղաժամ ծննդաբերությունների պտղի ներարգանդային թերզարգացման դեպքերի նվազեցում:Լիստերիոզ հիվանդության համաճարակաբանական հսկողության համակարգի լիարժեք գործադրում: Լիստերիոզի վերաբերյալ բժշկական անձնակազմի և բնակչության իրազեկման մակարդակի բարձրացում:

Ֆինանսավորումը՝պետական բյուջե:

11. «Հայաստանի Հանրապետությունում տարածված փոխանցողների նույնականացում, դրանց տարածագոտիների քարտեզագրման ծրագիր»

Նպատակը՝ օգտագործելով դաշտային աշխատանքների արդյունքում նմուշառված հոդվածոտանիներին, նույնականացնել և տեսակավորել դրանք, իրականացնել առանձին տեսակների տարածագոտիների քարտեզագրում՝ բացահայտել փոխանցողով պայմանավորված հիվանդությունների տարածման ռիսկի գոտիները՝ անհրաժեշտ կանխարգելիչ և հակահամաճարակային միջոցառումներ իրականացնելու համար:
Գործողություններ՝ Նմուշառված փոխանցողների նույնականացում և տեսակավորում. (Փոխանցողների նմուշառումն իրականացվում է մարզերում, այնուհետև տեղափոխվում Ռեֆերենս լաբորատորիա, որտեղ և կատարվում է վերջիններիս տեսակավորումը և նույնականացումը):

Արդյունքների վերլուծություն և քարտեզագրում. (Քարտեզագրում կատարելիս նշվում են այն տարածագոտիները, որտեղ նկատվել է վարակիչ հիվանդություններ փոխանցող հոդվածոտանիների տարածագոտիների կամ խտության փոփոխություն, բացահայտվում է փոխանցողով պայմանավորված հիվանդությունների տարածման ռիսկի գոտիները, որտեղ, անհրաժեշտության դեպքում, կիրականացվեն կանխարգելիչ և հակահամաճարակային միջոցառումներ:

Ակնկալվող արդյունքները՝ ՀՀ տարածքի՝ փոխանցողով պայմանավորված հիվանդությունների տարածման ռիսկի գնահատում և քարտեզագրում:
Ֆինանսավորումը՝պետական բյուջե